ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Ղուկաս աբեղա Զաքարյանը:

Հայրապետական վճռի կայացման համար հիմք է ծառայել Տ. Ղուկաս աբեղայի դիմումը:

Կարգալույծ հռչակված եկեղեցականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքը՝ Վահան Զաքարյան ավազանի անունով:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ են հռչակվել Իրաքի հայոց թեմի հոգևոր սպասավոր Տ. Վազգեն քահանա Ազիզյանը և Արցախի թեմից Տ. Ստեփաննոս քահանա Հակոբյանը:

Տ. Վազգեն քահանա Ազիզյանին կարգալույծ հռչակելու Հայրապետական վճռի կայացման համար հիմք է ծառայել Իրաքի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյանի միջնորդագիրը՝ Տ. Վազգեն քահանայի կարգազանց ընթացքի պատճառով նրան կարգալույծ անելու վերաբերյալ:

Տ. Ստեփաննոս քահանա Հակոբյանին կարգալույծ հռչակելու համար հիմք է ծառայել Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի դիմումը և Տ. Ստեփաննոս քահանա Հակոբյանի խնդրագիրը՝ քահանայական կարգից ազատ կացուցանելու վերաբերյալ:

Կարգալույծ հռչակված քահանաներն այսուհետ կդասվեն աշխարհականների շարքը և կկոչվեն ավազանի անուններով՝ Տ. Վազգեն քահանա Ազիզյանը՝ Ճորճիկ Ազիզյան անունով և Տ. Ստեփաննոս քահանա Հակոբյանը՝ Էմիլ Հակոբյան ավազանի անունով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ